# Տեղի ունեցավ սերունդների ջերմ հանդիպում և "Հաղթանակի ժառանգորդները" թեմայով զրույց



Չալթրի շրջանային պատմա-ազգագրական թանգարանում տեղի ունեցավ գերմանա-ֆաշիստական զավթիչներից Մյասնիկյանի շրջանի ազատագրման 71-րդ տարեդարձին նվիրված շատ անհրաժեշտ ու հետաքրքիր մի միջոցառում: Հայրենական մեծ պատերազմի մի խումբ վետերաններ, թիկունքի աշխատողներ և պատերազմի տարիների երեխաներ հանդիպեցին ժամանակակից երիտասարդության ներկայացուցիչների՝ Չալթրի թիվ 1 միջնակարգ դպրոցի աշակերտների հետ: Կայացավ "Հաղթանակի ժառանգորդները" ռազմա-հայրենասիրական թեմայով ջերմ զրույց: Վետերանները պատմեցին այն դաժան տարիներին ռազմաճակատում մեր մարտիկների ցուցաբերած անօրինակ արիության, խիզախության ու քաջության, թիկունքի մարդկանց անձնվեր աշխատանքի մասին, թե ինչպես միահամուռ ուժերի և համատեղ ջանքերի միջոցով մեր բազմազգ երկրի քաջարի ժողովուրդը գիշեր-ցերեկ անդադար մարտնչեց ընդդեմ նենգ ու վայրենի թշնամու և կարողացավ ձեռք բերել բաղձալի հաղթանակը:

Դպրոցականների համար ցուցադրվեց Ռոստովի ռազմա-պատմական թանգարանի մեծարժեք ֆոնդից բերված վավերագրական ֆիլմ: Պատերազմի դաժան օրերը պատկերող մարտաշունչ ու բոցառատ այդ հետաքրքիր կադրերը անչափ ցնցող ազդեցություն գործեցին պատանի հայրենասերների վրա և անջնջելի տպավորություն թողեցին նրանց մատաղ հոգիներում:

Ներկայիս երիտասարդությունը շատ բան ունի սովորելու և ընդօրինակելու ավագ սերնդի ներկայացուցիչներից: Դրանք արիության, խիզախության, հայրենիքի համար անձնազոհության և կյանքը սիրելու իսկական դասեր են: Կլոր սեղանի շուրջ տեղի ունեցած փոխհաղորդակցության ընթացքում երիտասարդները բազմաթիվ հարցեր տվեցին վետերաններին ու թիկունքի աշխատողներին: Եվ ստացան ցանկալի պատասխաններ:

Միջոցառման վերջում պատանիներից յուրաքանչյուրը ներկա գտնվող վետերաններից մեկնումեկին հանձնեց երախտագիտության ջերմ խոսքերից հյուսված նամակ: Նրանք ցանկացան վետերաններին և թիկունքի աշխատողներին ամուր առողջություն, բարօրություն, երկար տարիների կյանք և ուրախ տրամադրություն:

Հիրավի, սերունդների ներկայացուցիչների անմիջական ջերմ հանդիպումները հայրենասիրական-դաստիարակչական մեծ նշանակություն ունեն: Պետք է հաճախակի անցկացնել նման միջոցառումներ, քանի որ հենց այդպիսի հանդիպումների ու զրույցների շնորհիվ է բացահայտվում և փոխանցվում սերունդների կուտակած անգնահատելի փորձը:

*Նկարում՝ պատմա-ազգագրական թանգարանում անցկացված հանդիպման մասնակիցները:*

Լուսանկար՝ Վ. ԽՈՋԿԻՅԱՆԻ

# Ավարտվեց վոլեյբոլի շրջանային առաջնությունը





Մյասնիկյանցի սպորտասերների մոտ մեծ հետաքրքրություն առաջացրին վոլեյբոլի գծով շրջանային առաջնության խաղերը, որոնք անցկացվեցին Շահումյանի անվան կոլտնտեսության "Հաղթանակ" մարզադահլիճում:

Ամեն անգամ մրցումներին ներկա էին լինում և մեծ ուշադրությամբ դրանց ընթացքին հետևում սպորտի բազմաթիվ երկրպագուներ, որոնք ամեն կերպ ձգտում էին իրենց բացականչություններով ու ծափերով խրախուսել ու ոգևորել սիրելի թիմերի մարզիկներին: Այդ բանը իր հերթին լրացուցիչ լարվածություն էր առաջացնում մրցումների ընթացքում: Եվ մարզիկները ձգտում էին առավել եռանդով խաղալ ու հասնել հաղթանակի:

Արդյունքում հաղթող ճանաչվեց "Ռայավետ" թիմը, որը հավաքեց 15 միավոր: Երկրորդ տեղը 11 միավորով գրավեց Լենինավան խուտորի "Նեյա-Յուգ" թիմը, իսկ երրորդ տեղը 6 միավորով՝ "Չալթրի թիվ 2 դպրոց" թիմը: Չալթրի շինարարական նյութերի արտադրական-առևտրական ձեռնարկության թիմը գրավեց 4-րդ տեղը: Մրցանակային տեղեր գրաված թիմերը պարգևատրվեցին դիպլոմներով և գավաթներով, իսկ խաղացողները՝ մեդալներով:





*Ձախակողմյան նկարներում՝ Լենինավանի "Նեյա-Յուգ" թիմը Կարմիր Ղրիմի գյուղապետ Վլադիմիր Վարդկինայանի հետ. ներքևում "Ռայավետ" և "Նեյա-Յուգ" թիմերը պատրաստվում են սկսել հերթական խաղը:*

*Աջակողմյան նկարներում՝ ֆիզիկական կուլտուրայի և մասսայական սպորտի շրջանային սեկտորի առաջին կարգի մասնագետ Սուրեն Զաքարյանը պարգևներ է հանձնում Լենինավանի թիմի ավագ Մուշեղ Բլքյանին և "Չալթրի թիվ 2 դպրոց" թիմի ներկայացուցիչ Բաղդասար Բաբիյանին:*

Լուսանկարները՝ Ա. ՄԻՐՈՒՔՅԱՆԻ